

նենար: Խզհանարութեան մօտեցող զգացում է իւրօք այս թէ կոկորդիլոսի արտասուք: Յառաջաբանին առաջին էջին վրայ ծանուցուած լինելը՝ թէ գաւազն գանազան մասերը տարբեր է իրարմէ բարական հեռաւոր թուականներու մէջ են գրուած, և թէ հեղինակն ինքնին զանոնք ամբողջովին վերածնունդով կարտու կը նկատուե՝ ի՞նչ ազդեցութիւն կըրած էր ունենալ գրախօսին դատելու կերպին վրայ՝ որ այժմ ողբալի նկատուէր այդ ակամայ մոռացումը:

— Այս առթիւ իր բարեհաճած հրատարակչական թէլադրանքներուն, եւ այն արտաշարժ յորդորակներն զոր հասկնալի լայնմտութեամբ կ'աւանդէ մեզի՝ հասկցնելու համար թէ ի՞նչ պէտք էինք ընել լրիւ մատուցած ըլլալու համար մեր «հիացողի եւ աշակերտի» մեծարանքը երախտաւոր ուսուցիչին, այս ամէնուն շնորհակալութիւն յայտնելէ աւելի հարկ կը զգանք դիտել առ թէ այդ առթիւ իր մասնաւոր շ, Տաշեանի Գալթըն-ճեան «Որբազան պատարագամտայցք»ը, հակառակ համետնութեան զիջուցածին, ո՛ր թէ հրատարակչական այլ ուսումնասիրական ձեռնարկ է, ընդարձակ ծմօթարանութիւններով և յաւելումներով ճիշտացուածին, ո՛ր թէ երբմէ լոկ հրատարակչական աշխատութիւն՝ հանրութեան փափագանաց համմատ փութով կ'լայն ընծայելու համար հանդուցեալին բոլոր գործերը, այլ կերպ ընդլայնումներ յետաձգելով ապագայ կարելութեանց:

— Գ. Ալբրայտնի գրութեան վերջին մասը վերջաբաժնի մըն է. այդ բաժը առնելով «Գաւազն ճառ» (peroraison) իմաստով, եւ արդարեւ շտապանունեայ այս յօդուածաշարքը — եթէ մանաւանդ սիւնակներու ստորոտքը ինքնենք աւանդ մէջ ցանկնուած մանրուք նօթերը — ճառ մըն է աւելի քան բանասիրական որ եւ կարգի գրութիւն, իսկապէս հետաքրքրական ոգով տոգուած, թէ՛ ոչ չքնարական զեղումով: Ատենաբանը անոր մէջ իր ողբն է որ կը յանկերգէ հայ գրականութեան զիխուն. «Ճարտասանական մտաշունչութիւն» մը, կ'ըսէ, այսինքն «ոճով եւ ոլորուն», և «մտածումների պայծառութեան, կարծիքների հիմնաւորման, դատումների եւ գաղափարների բանաձևումի մասին» անհոգ կեցողով գրելու ունակութիւն էր խորթացուցած է գերական ոգին: Նշումովում՝ բառերի ներգալնակ հնչումին, պարբերութեանց ախորժ թաւալումին, հայոց գրականութեան մէջ մարդիկ անընդունակ դարձած են այլ ևս անդրադառնալու թէ յատակ ու որոշ գաղափարների տրամաբանական ներդաշնակութեան մէջ է դատողական օճի գեղեցիկութիւնը: Ու դեռ կը շարունակուի. «բառ ու պարբերութիւն շոյում են ականջը և թմբկեղուն միտքը, սառն ու չոր գաղափարները խոցում են այդ մտաշունչութեան տէրերի ներազդեցութիւնը, որ սիրում է անորոշի եւ անժիրի շոյիչ ոլորտը: Ու այս ամէնը՝ այնպիսի ոլորուն ոճով և այնքան թաւալում անանգով՝ ինչպէս այս մէջըրումներէն ևս պիտի մակարեբեն ճշուարտերի այդ յօդուածաշարքին չհանգիպողներ» որ ստիպուած կը

լինիս խորհելու թէ որու համար կրնան ըստած ըլլալ կարծես ներքին փորձառութենէ միայն հանուած այս բառերը: Ի վերջոյ՝ վերջը. «Այս մի չարիք է, ինչպէս լարիք են բոլոր ախորժիկ արքեպիսկոպոսները: Թէ՛ն առանց հարկաւոր փորձառութեան այդ մասին՝ կ'ընդունինք այս վերջին խօսքի հէշտութիւնը, բայց այսպէս եւս այնպէս մեզի իրաւունք կը նկատուի գեռ բսելու թէ բոլորովին անհարկի է այդ տողերուն մէջ զգացուած մտաղխութիւնը, և անարգաւոր անող յայտնուած յոռետեսութիւնը: Ճշմարիտ գրականութիւնը մարդը անատակ չ'ընէր ընաւ ստոյգ գիտական միտքին. գեղեցիկութիւնը այդքան ալ ներհակ չէ՝ ճշմարտութեան և հակադարձաբան. Գարալ, Թէն, Էմբրսն, Ռենան, Լըմէթը, Ֆակէ եւ շատ ուրիշներ, արձակագիր բանաստեղծներ նկատուելու չափ գրագետ լինելով հանդերձ՝ ոչ նուազ գիտուն միտքեր են նոյն ատեն: Մակերես սային դատողութեան տէր անձնուր, տկար միտքերու մէջ է միայն որ գրական հրայքը կըրայ զոլորիկացնել գիտական ոգին: Երեւն է իմացացուած նախադիւնը, հետագար են անուղիղ է իր եզրակացութիւնը: Գրաբան եւ բանաստեղծ Դուրեան նոյնքան նաեւ հմուտ եւ գիտուն միտք մըն է իր Մտանադրութեան պատմութեան մէջ: Զայս կ'ըսենք ոչ թէ «հիացող» է եւ «աշակերտ» զգայնութեամբ, որպէս թէ մը շատ կը ձեռքարանէ Ալբրայտն, այլ այդ գիրքով ըլլօրեն զրազողի համոզումով: Կը կըրնինք, վերջացնելու համար ընդ միշտ. միակողմանի է գրախօսականը, անհիշող դատումներով լի է ան, եւ թիւ մը լայնախոսքնադատող ոգին իսպառ կը պակսի անոր մէջ: Թովմասեան իրազգածութեան օրինակը երբեք ի զեպ չէ իր պարագային համար. իսկ շեթէ... նշեալով կպրածնութեան (asphalté) ո՛ւղիք անհիշելի կըրծուն ճամբան է զեպի ճշմարիտ տանընդ:

ՆԱՅԱՐ

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցան Ապրիլ ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյ Յօրից մօղովը հօթն անգամներ ի նիստ դուստրուեցաւ իրբեւ վարչական Մարմին, Լուսն. Գիտ. Աստանը՝ մէկ անգամ, իսկ Ուսումն. Խորհուրդը՝ երկու անգամ:

● Բշ. 30 Մարտ. — Ս. Պարտիքը Հօր Կողմէ, Տ. Մեքրոպ Մրբազան գնաց այսօր Ռամալու, ներկայ գտնուել Չայնաթիւրի կայանի բացման հանդէսին, որ տեղի ունեցաւ Բ. Գոմիսիէի նախագահութեամբ:

● Գշ. 31 Մարտ. — Տ. Ցարութիւն վերջ. Պարտեան Տրանս, Հիւանդանոց փոխադրուեցաւ:

● Գշ. 1 Ապրիլ. — Գ. Ռընէ Բիւնն հայաւէր Ֆրանսացի մտաւորականը, որ Պաղեստին եկեղ

— Երեկոյն վանուց մեծ բակին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր տարեկան անդառաւոր։

● Բշ. 13 Ապրիլ. — Մեծահաւոր Ս. Գատարաւ Ի Ս. Յակոբ, Ժամապարտութեամբ Ս. Գատարիարք Եօր. որ և քարոզեց. բնաբանն էր. Վերստե Գրիստոս իսպառնեաց զմահ և լուսաւոր արար զկեանս և զանեղութիւնս ի ձեռն աւետարանին։ Բայցատեղի թէ Գրիստոսի յարութեան առաջին և մեծագոյն արդիւնքն է անմահութեան հաւատքը, որ քրիստոնէական բարոյականին ամենէն կարեւոր սկզբունքն է։ Ի վերջ Ս. Գատարաւքի, տեղի ունեցաւ երբագարած թաւոր կենաց փայտի։ Ապա Ս. Գատարիարքը Բեմէն արտասանեց ուխտաւորաց ողջերթի մաղթանքը։

Յետ Ս. Գատարաւքի Ս. Գատարիարքը Մեծ Դանիւրին մէջ ընդունեց Միաբանութեան, Ժողովուրդին, կառավարութեան և հիւպատոսաց ներկայացուցիչներու և տեղացի ազգային և օտար երեկներու շնորհաւորական այցելութիւնները։

● Գշ. 14 Ապրիլ. — Տ. Տիգրան Վրդ. գատարաւքեց Ս. Գրիստոսի Սեղանի յայտ. և քարոզեց Վեյ զիսէք որոյ հոգւոյ էք զուգը բնաբանով. ցոյց տուաւ Զհրիթեան Եղբայր անպայման նուիրումը Գրիստոսի, թողով իրենց հայրն ու նահը, անոնց նախանշայող օգին. որով այդբեցան Գրիստոսի հետ, թէ և աստիճանաբար միայն հանչնալով զայն, բայց ի վերջոյ լիովին հանչնալով հոգիին՝ օրուս ծառայեցին։

— Ս. Գատարիարքը ընդհանրապէս Տնօրէն Ժողովի անգամներուն և գլխաւոր յարգապետաց, գատական շնորհաւորութեան պաշտօնական այց տուաւ Լատին և Յոյն Գատարիարքարանները և Ֆրանչիսկան Միաբանութեան Տ. Մերոպ Սրբազան ընդհանրութեամբ վաւարապետաց, այցելեց Ղպտոց. Ատուրաց, Յոյն կաթիլիկաց, իսկ Տ. Կիրիւղ և Տ. Հայրիկ Վարդապետը՝ Հայ կաթիլիկներու և Մարտիրներու։

— Մեր Գատարիարքարանը շնորհաւորութեան այցի եկան Ղպտիք, Ատուրեք և Հայ և Յոյն կաթիլիկք, Ռուսք. Հապէշք, Մարտիրք։

● Եշ. 16 Ապրիլ. — Զատիկի ուխտաւորները մեծ մասամբ մեկնեցան. իբր 400 էր անոնց ընդհանուր թիւը։

● Բեք. 17 Ապրիլ. — Ս. Գատարիարք Հայրը, Տ. Մերոպ Սրբազանը, Տ. Շնորէք Արեղայի և Գ. Նուբեանի և Գ. Օշականի հետ հանգիստի օր մը անցուց Երլեզլի մէջ։

● Եր. 18 Ապրիլ. — Ծանօթ նկարիչ Գ. Արամ Խաչատուրեան, որ Ժամանակէ մը ի վեր հեռանդ էր, մեծած էր այս առաւանտ Յուդիստաւորութիւնը երեկոյնի կատարուեցան Ս. Էլմիածին նկերգին, ի ներկայութեան բոլոր Միաբանից և աշակերտաց և Ժողովուրդի։ Սրբազան Գատարիարքը խոսեցաւ հակիրճ դամբանական մը, զորուստեց ընտիր արեւնստագէտը և պատուական հայրը, որ իր կենանքին միջև վերջին շունչը ունեցել խնայած էր իր գաւաակներուն զատարապիւնութեան համար։ Սրկար տարիներէ ի վեր Գեօգրոսիան և նկարի ուսուցիչ էր Ժառանգ. և Թարգմանչաց վարժարաններուն մէջ։

● Կիր. 19 Ապրիլ. — Ըստ տղորութեան, Մեծ Գատարաւքի Նահապետներուն հոգիներուն համար Հանգրտեան Գատարաւք Ժամապարտաւորայր Ս. Փրկիչ վանուց մէջ, Գարդղեք Ս. Գատարիարք Հայրը, բնաբան առնելով Շնորհալոյ խօսքը. Վերստե Գործելին ըստ Աստուծոյ՝ անդ է հանգչել ըստ Աստուծոյ։ Ազգին և Եկեղեցիին օգտին ու փառքին համար իրենց կեանքը նուիրողներուն գործը ներկայացուց իբր աստուածանշան գործունէութիւն, ուստի և անոնց սուրբ իրաւունքը համարեց յատկանշական հանգրտե ի յոյս երեսաց Աստուծոյ։ — Ս. Գատարաւքէն յերջ, Հոգեհանգստեան Պաշտօնի կատարուեցաւ ընդհ. գերեզմանատան մէջ ամփոփուած կամաւորներուն շիրմին չաւր. հոն բանախօսեց Տ. Եղիշէ Վրդ., ոգեկենդիւյ ազգային նահապետներու յիշատակը, անոնց նուիրումին օրինակէն դասեր հանելով վերապրող Հայութեան համար և ցոյց տալով ազգային և բարոյական պարտականութիւնները. որոնց կատարումով միայն պատկառ պիտի կեցած լինինք անոնց յիշատակին հանդէպ։

● Բշ. 20 Ապրիլ. — Ըստ Հին Տօմարի, Աւետման Տօնին առթիւ և Գեթեմանի Ժամապարտուեցաւ Ս. Գատարաւք. քարոզեց Տ. Տիգրան Վրդ., լեզվիցի ինձ ըստ բանի ջուրմ բնաբանով. ցոյց տուաւ Ս. Կոյիւր մեծութիւնը իբրև առթի մեր զիկուսութեան. իր հոգեհալի պատարասականութիւնը՝ ընդունելով Աստուծոյ կոչը. ներկայացուց զին բուն տանար Աստուծոյ. չարքապիկց Գրիստոսի և լուծող Եւայի անէմքին կիրքը։

— Երեկոյն, Ժառանգաւորաց հանդիսաւոր. հին մէջ բանախօսեց Տ. Կիրիւղ Վրդ., ինքին էր Երուսաղէմահայ պատմութեան առաջին շրջանը. այսինքն քրիստոնէութեան Ա. դարէն մինչև Արարական նուաճումը. պատմական Նշաններով և ապացոյցներով հաստատեց Հայոց շատ կանուխէն Պաղեստինի հետ ունեցած յարաբերութիւնները և Երուսաղէմի մէջ ուխտաւորաբար և հաստատուն բնակութեամբ ներկայութիւնը. այսպէս զանազան Ս. Տեղեաց մէջ ընկերակցաբար և առանձնապէս ունեցած վանքերը և ի վերջոյ ինքնուրոյն հայկական վանահանութիւնը, և այլն։

● Գշ. 21 — Ռւր. 24 Ապրիլ. — Իբր հետեանք անցեալ Կիրակի, 19 Ապրիլ, Յապոլէի մէջ տեղի ունեցած արար-հրէական ընդհարումներուն, որոնց մասին արտասահմանեան մամուլին ու գործադարութեանց տեղեկութիւններն չափազանցեալ էին յայտնապէս, այս հիշք օրերուն առեւտրական կայուն վիճակ մը յառաջ եկաւ Ս. Գարդարիս և միւս քաղաքներուն մէջ չհասած գործադուրի պատճառաւ։ Բայց, կառավարական հեղեղութեանց չկարելի տեղի չեն ունեցած արիւնոտ մեծ անկարգութիւններ։

● Եր. 25 Ապրիլ. — Երեկոյն, Վերաշահաւոր թաւորով Միաբանութիւնը մուտք գործեց ի Ս. Յարութիւն, վաղուան Աշխարհամատարան տունին առթիւ, զխաւարութեամբ Տ. Մեռոպ Սրբազանի։

— Այս գիշեր հրդեհն պատահեցաւ մեր Սուրբ Զրիշտակապետ վանուց պատկոյց վանքապատկան միջնորոցի մը մէջ, որ վարձու տրուած էր, ու չէնքը ամբողջովին այրեցաւ: Լրջէն խնդրուեալ ժողովուրդին բուռն շանքերուն շնորհիւ կարելի եղաւ արգելել կրակին յառաջացումը գէշի վանքը:

● Կիր. 26 Ապրիլ. — Գիշերային եւ տառաւորեալ ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Թարու-թեան մեր վերնամաստան մէջ. Տ. Մեքսիկայ Սըր-բազան հանդիսիւ պատարագեց Ս. Գերեզմանին վրայ, ապա քարոզեց ՎՏԷՐ Է Ի տեղւոյն յայտ-միկ. (Ծննդ. ԻՐ. 16) քնարանի վրայ. ներկա-յացուց Սոցմոնեան տաճարն իբրեւ ստուեր քը-րիտոնեական եկեղեցիին. յատենանց այս փերշնայն գերազանցութիւնը իբրեւ իսկական քնարարան Աստուծոյ, իբրեւ տեղի ուր աստուա-

ծային գիտութիւնը կ'աւազուէր, ուր երկնային արդարութեան պատգամները կը քարոզուէին, և ուր մեղքէն ախտաւորուած հոգիին իր բուժումը կ'ընդունէր Ազնկահելով Եկեղեցւոյ տիեզերա-կանութեան գաղափարին, իբրեւ այդ մտածու-մին յիշատակարան մատենանց Ս. Թարութեան տաճարը, ուր բոլոր քրիտոնեայ ազգերը կը միա-նան ամէն օր անմահութեան խորտին առջև, իբրեւ այդ գաղափարին ամենէն չեմ շատա-գովը, իր հորայրական յայնախոհ վերաբերմուն-քովը հանդէպ բոլոր քրիտոնեայ եկեղեցեաց:

● Գշ. 28 Ապրիլ. — Եգիպտոսի վեհապետ Յուստ Ա. Թագաւորի մահուան իւրը՝ Ս. Պատ-րիարքը ցաւակցական հեռագիր տուաւ Վան. Այլ Մահէն Թաշայի, և այնքանութեան՝ տեղւոյն Եգիպտական չիւպատարան:

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՈՆԵԱՆ

Միաբանութիւնս միշտն ունեցաւ կորեցնելու իր բազմամեայ անգամներէն ձերունազարդ այս հոգեւորականը. որ Ապրիլ ամսու 2ի Յշ. օրը վախճանեցաւ Ս. Քաղաքի Փրահասկան Հիւանդանոցին մէջ, ուր փոխադրուած էր երկու օրեր առաջ:

Ծնած էր 1862ին, Շապին Գարահիւսարի Արտաթի գիւղը. և, իննամեայ հասակին, իր այ-րիացեալ հորը՝ Դուկասի հետ Կ. Պոլիս փոխադրուելով. ժամանակ մը յայրորդաւոր աշակերտած Օրթագիւղի, Պայաթի և Զայաթիոյ ազգային նախակրթարաններուն, 1885ին Երեսույզէ մեկած, և, թէև արդէն հասակաւոր երիտասարդ, ընդունուած է Ս. Աթոռոյ ժողովուրդաւորաց վարժա-րանը, որմէ և շրջանաւորտ եղած է 1888ին: Անմիջապէս մտած է Պատրիարքարանի դիւանը, ուր տարի մը իբր օգնական-գիւրանապետ ծառայելէ վերջ, կարգուած է գիւրանապետ. պաշտօն՝ զոր շարունակած էր 1889-1914: Անշնան չէ եղած այդ առթիւ իր ծառայութիւնը՝ ոչ միայն ինքնակա-կան և արձանագրական, այլ անաւանդ վտերարմիցիներու զատարարման և վիճակագրական աշխա-տութեանց մէջ: Կիրթ էր գեղագրութեան և գծագրութեան, մասամբ նաև նկարչութեան մէջ, և այս տեսակէտով ևս օգտակար եղած է, ժողովուրդաւորաց վարժարանի մէջ իբրեւ ուսուցիչ: Վարդապետ ձեռնագրուած է 1892ին՝ հոգեւոր Տ. Թարութեան վեհապետանէ, որուն գաւառական կիրճ եղած է նաև տարիներ: 1905էն ի վեր անդամ էր Գահաճարանի Թանձնատնոյցի. իսկ քանիցս նաև եղած է անդամ Տնօրէն Ժողովոյ: Բնաւորութեամբ բուռ, նկարագրով նախանձախելի, քրտակ իրողը էր Ս. Աթոռոյ: Իբր հինգ տարիներէ ի վեր բոլորովին զաղքած էր գործելէ, տա-ռապագին վիճակի մը հետևանքով զատապարտուած ըլլալով դրեթի անշարժութեան:

Վախճանման վաղորդայնին, ի ժամ Ս. Պատարագի, Ս. Պատրիարք Զայր օծումը կատա-րեց և խոսեցաւ զամբանականը՝ օգնականի գարձի իմայ եկաւ ընտանիքին վրայ. բացառեց թէ քրիտոնեական մտածումին մէջ մաշը վերադարձն է անձին հոն՝ ուսկից եկած էր. ինչպէս մար-մինը կը դառնայ ի հող՝ ուսկից անուած էր, նոյնպէս հոգին կը վերադառնայ անմահութեան կիսներին՝ որ հոգիին նախալիկանը. անոր նախահայրերն էն. երկուսուր կանքը պանդխտութիւն մըն է ուրիմ, և առաքելի մարդը նա է, որուն սրտին մէջ ընդ միշտ վառ կը մնայ իր հոգեկան հայրենքին կարօտը, բուն հոգեւոր և յախտեական կեանքին սէրը: Անոնք, որոնք այսպէս կ'անցընեն իրենց ասուեր կեանքը. երանական զգացումով մըն է որ կ'անցնին միւս կեանքին, աւելի քան ինչպէս իր սիրելի հայրենիքը զարձոյ նոգելը: Ապա ներկայացուց կեանքը հան-գուցեային, և հանգիստ մարմնիով անոր հոգեւոր:

Յուզարժեւորութիւնը կատարուեցաւ Լուսաբարապետ Տ. Մեքսիկայ Սրբազանի գլխաւորու-թեամբ և մատակցութեամբ բովանդակ Միաբանութեան, աշակերտաց և ժողովրդեան: Զան-գուցեային մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչի վանուց պատկոյց հասարակաց գերեզմանատունը, միաբաններու յատկացեալ հողաբաժնին մէջ:

Հանգիստ իր հոգեւոր: